



## Անկախ աուդիտորի եզրակացություն

*Ներկայացվում «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերերին*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփիչը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՄ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ՄՄՄ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄՄ կանոնագրք), և պահպանել ենք ՀՄԷՄՄ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:


Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սարգսյան, FCCA  
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA  
Աուդիտոր

28 փետրվարի, 2020թ.  
ք.Երևան



«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ  
 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Հասույթ	5	698,675	661,287
Այլ եկամուտ		60,187	-
		<u>758,862</u>	<u>661,287</u>
Պետությանը հանձնված գույքի ինքնարժեք		(60,187)	-
Ծրագրի սպասարկման ծախսեր		(383,759)	(387,533)
Աշխատավարձեր և հարակից հարկեր		(112,875)	(150,947)
Սերվերային համակարգի սպասարկման ծախսեր		(18,126)	(17,518)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(12,668)	(5,566)
Ամորտիզացիոն և մաշվածության ծախսեր		(4,687)	(14,816)
Տարածքի վարձակալության ծախսեր	6	(11,860)	(15,347)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(1,129)	(6,539)
Հաշվապահական ծախսեր		(4,800)	(4,800)
Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր		(1,720)	(1,977)
Մարքեթինգի և հանրային կապերի ծախսեր		(1,688)	(527)
Կոմունալ ծախսեր		(4,640)	(4,230)
Հեռախոսային և ինտերնետ կապի ծախսեր		(2,878)	(2,270)
Մեքենայի վարձակալության ծախսեր		(311)	(933)
Ապահովագրական ծախսեր		(4,039)	(3,912)
Բանկային ծախսեր		(759)	(332)
Գործառնական այլ ծախսեր		(16,823)	(10,775)
		<u>(642,949)</u>	<u>(628,022)</u>
Գործառնական շահույթ		115,913	33,265
Ֆինանսական ծախսեր		(12,964)	(3,381)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(կորուստ)		1,303	(296)
Շահույթ հարկումից առաջ		<u>104,252</u>	<u>29,588</u>
Շահութահարկի գծով ծախս	7	(21,032)	(6,505)
<b>Զուտ շահույթ և տարվա համապարփակ արդյունք</b>		<u><u>83,220</u></u>	<u><u>23,083</u></u>

Ավետ Մանուկյան

Տնօրեն

28.02.2020թ.



Թի Հքաունթ ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ստելլա Անդրեասյան

Գլխավոր հաշվապահ

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ  
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Ծրագրաապարատային համալիրի արդիականացում	8	96,249	60,187
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	77,998	73,904
Դրամական միջոցներ	10	177,684	171,992
		<u>351,931</u>	<u>306,083</u>
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	11	3,332	4,600
Ոչ նյութական ակտիվներ	12	60,045	2,279
Հետաձգված հարկային ակտիվներ	13	805	999
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	380
		<u>64,182</u>	<u>8,258</u>
		<u>416,113</u>	<u>314,341</u>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Փոխառություններ	14	160,560	148,854
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	131,460	124,614
		<u>292,020</u>	<u>273,468</u>
		<u>124,093</u>	<u>40,873</u>
<b>ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
Կանոնադրական կապիտալ		50	50
Պահուստային կապիտալ		8	8
Կուտակված շահույթ		124,035	40,815
Ընդամենը սեփական կապիտալ		<u>124,093</u>	<u>40,873</u>

Ավետ Մանուկյան

Տնօրեն

28.02.2020թ.



Թի Ըբաունթ ՄՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ստելլա Անդրեասյան

Գլխավոր հաշվապահ

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ  
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն  
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ծառայությունների իրացումից մուտքեր	831,065	723,671
Այլ մուտքեր	919	326
	<u>831,984</u>	<u>723,997</u>
Ծրագրաապարատային համալիրի արդիականացման գծով վճարումներ	(117,586)	(60,123)
Ծառայությունների գծով վճարումներ	(471,226)	(482,941)
Վճարումներ աշխատավարձի գծով	(82,604)	(107,663)
Հարկային վճարներ	(151,898)	(188,213)
Այլ ելքեր	(2,144)	(4,772)
	<u>(825,458)</u>	<u>(843,712)</u>
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<u>6,526</u>	<u>(119,715)</u>
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(1,147)	(10,236)
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<u>(1,147)</u>	<u>(10,236)</u>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Փոխառություններից մուտքեր	-	44,614
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<u>-</u>	<u>44,614</u>
<i>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<u>5,379</u>	<u>(85,337)</u>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	313	257,792
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	171,992	(463)
<i>Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ</i>	<u>177,684</u>	<u>171,992</u>

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ  
 Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2018	50	8	40,815	40,873
Տարվա շահույթ	-	-	83,220	83,220
31 դեկտեմբերի 2019	50	8	124,035	124,093

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2017	50	8	17,732	17,790
Տարվա շահույթ	-	-	23,083	23,083
31 դեկտեմբերի 2018	50	8	40,815	40,873